ԿԱՐԾԻՔ

ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ «ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: 2019-2024 թթ. ընթացքում Հայաստանի տնտեսությունը ՀՆԱ-ի մեծ աճ է գրանցել՝ հաշվի առնելով համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերները, այդ թվում՝ COVID-19 համավարակը, 44-օրյա պատերազմը, ռուս-ուկրաինական հակամարտությունը: Տնտեսության ծանրակշիռ կատարողականին մեծապես նպաստել է կապիտալի մեծ ներհոսքը, արտահանման կայուն պահանջարկն ու շինարարության, հյուրընկալության և տեղեկատվական ու կապի ծառայությունների կայուն զարգացմանը: Չնայած այս վերջին ձեռքբերումներին, Հայաստանը դեռևս կանգնած է կառուցվածքային նշանակալի մարտահրավերների առջև՝ առաջին հերթին՝ մասնավոր ընկերությունների, մասնավորապես՝ փոքր բիզնեսի համար ֆինանսական միջոցների հասանելիության ոլորտներում, որոնք սրվում են ոչ ֆորմալ հատվածի մրցակցությամբ և անբավարար չափով որակավորված աշխատուժի կողմից: Արտադրողականության աճին խոչընդոտում են տարածաշրջանային տարբերությունները, մինչդեռ արտահանման զամբյուղում գերակշռում են ցածր հավելյալ արժեքով արտադրանքները, մասնավորապես մետաղները և հանքանյութերը: Բացի այդ, Հայաստանի փոքր և ծովային ելք չունեցող աշխարհագրությունը, զուգորդված տրանսպորտային ենթակառուցվածքի հետ, սահմանափակում է շուկայի ինտեգրումը և ներքին կապակցումները: Չնայած մասնավորեցման և ծախսերն արտացոլող սակագների ներդրման ուղղությամբ դրական ջանքերին, էներգետիկ հատվածը մեծապես կախված է ներմուծվող էժան ռուսական գազից, ինչը խոչընդոտել է վերականգնվող էներգիայի հզորության եւ էներգաարդյունավետության ուղղությամբ ներդրումների ընդլայնմանը: Այս խնդիրներն ընդգծում են շարունակական բարեփոխումների անհրաժեշտությունը: Թեպետ առաջընթաց է գրանցվել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացումը և հակակոռուպցիոն միջոցառումները, Հայաստանի՝ անցումային շրջանի հատկությունների մասին վկայում են այն մասին, որ տնտեսական անցման բոլոր վեց հարթություններում երկիրը շարունակում է նկատելիորեն զիջել Տնտեսական համագործակցության և զարգացման

կազմակերպության (ՏՀԶԿ) տնտեսություններին: Հաշվի առնելով այս նկատառումները՝ երկրի զարգացման ռազմավարության հաջողության համար Հայաստանը պետք է կենտրոնանա արտահանման դիվերսիֆիկացման ամրապնդման վրա՝ աջակցելով մեծ ներուժ ունեցող ոլորտներում գործունեություն ծավալող ընկերություններին՝ միաժամանակ աշխատելով բարելավել առևտրային երթուղիները և լոգիստիկ ենթակառուցվածքները, ինչը տնտեսական արդյունավետ փոխազդեցությունների հնարավորություն կընձեռի:

Վերոնշյալն ընդգծում է աշխարհատնտեսական ներկայիս մարտահրավերների պայմաններում հիմնական առաջնահերթությունների առաջադրման և գնահատման համակարգերի ներդրման ակնհայտ կարևորությունը, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի ***արդիականությունն ու անհրաժեշտությունը:***

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները

Ատենախոսության առաջին՝ «Արտաքին շոկերը որպես տնտեսության զարգացման մարտահրավերներ և տնտեսական աճի հնարավորություն» գլխում, անդրադարձ է կատարվել արտաքին մարտահրավերներին, տնտեսության խոցելիությունը կանխատեսող ցուցանիշների քննական վերլուծությանը, ուսումնասիրվել են ՀՀ տնտեսության վրա արտաքին շոկերի ազդեցության փոխանցման հիմնական ուղիները և էմպիրիկ արդյունքները, տնտեսության առաջնահերթությունները և ներմուծման, արտահանման, հանքարդյունաբերության ու զբոսաշրջության վրա հիմնված աճի հիփոթեզները:

Ըստ հեղինակի՝ զբոսաշրջությունը և, մասնավորաբար, զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերը, ինչպես նաև հանքագործական արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների աճն, ընդհանուր առմամբ, դրական են ազդում երկրների տնտեսական աճի վրա:

Ներմուծման ծավալների աճը երկրներին հնարավորություն է տալիս բարձրացնել արտադրողականությունը և զբաղվել նորարարություններով, ինչն էլ երկարաժամկետ հատվածում ապահովում է տնտեսական աճ, իսկ, եթե դա ուղեկցվի արտահանման ծավալների աճով, մասնավորաբար՝ դիվերսիֆիկացմամբ և արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների արտահանմամբ, ապա կհանգեցնի ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը՝ նվազեցնելով երկրի խոցելիության աստիճանը արտաքին շոկերով պայմանավորված ճգնաժամեր տեղի ունենալու հավանականության հանդեպ:

Ատենախոսության երկրորդ՝ «Համաշխարհային զարգացումները, ՀՀ տնտեսության խոցելիությունը և հնարավորությունները՝ ըստ առաջնահերթ ոլորտների» գլխում, ներկայացվել են ՀՀ մրցակցային առավելությունները, արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորումը՝ մարտահրավերները և դիվերսիֆիկացման հնարավորությունները, արտաքին մարտահրավերների ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, վերջինիս խոցելիությունը և դերը տնտեսության մեջ, ինչպես նաև համաշխարհային մարտահրավերների ազդեցությունը ՀՀ մետաղական հանքաքարի արդյունահանման ընկերությունների վրա:

Ատենախոսի հավաստմամբ՝ ՀՀ զբոսաշրջության ոլորտը բավականաչափ զգայուն է արտաքին մարտահրավերներով պայմանավորված իրավիճակային փոփոխությունների հանդեպ, որը ակնհայտ դրսևորվել էր համավարակի պայմաններում:

Մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտի ընկերությունների պարագայում 2021-2022 թթ. հարկային համակարգում տեղի ունեցած փոփոխությունները բացասաբար կարող են ազդել ոլորտի ներդրումային գրավչության վրա՝ օրենսդրության կայունության տեսանկյունից: Դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում կիրառվող արտահանման տուրքերը բավականին մեծ հարկային բեռ էր հանդիսացել ընկերությունների վրա, իսկ ռոյալթիի նոր հիբրիդային համակարգի ներդրումը ավելի է մեծացնում ռոյալթիի վճարների մասնաբաժինը ընկերությունների կողմից վճարվող հարկերի մեջ՝ հատկապես համաշխարհային շուկայում մետաղների գների բարձրացման պարագայում և ավելի պրոցիկլիկ դարձնելով հակաբյուջետային քաղաքականությունը, ինչն էլ ևս բացասաբար կարող է անդրադառնալ ներդրողների ներգրավման գործընթացի վրա: Հեղինակի կարծիքով, օրենսդրության կայունությունն ապահովելու տեսանկյունից և ներդրումների ներգրավման նպատակով, կարևորվել է հատուկ պայմանագրերի առկայությունը: Գրավիչ ներդրումային դաշտ ունենալը կարևոր է հատկապես ոչ ռուսական կապիտալով ներդրողների կամ ընկերությունների ներգրավումը՝ հաշվի առնելով ներկայիս ռուսական կապիտալի դերակատարումը ոլորտում և հետագայում հնարավոր պատժամիջոցներից

խուսափելու նպատակով, որպեսզի չխաթարվի ոլորտի գործունեությունը: Ինչ վերաբերում է իրական ՀՆԱ-ի աճի փոփոխությունների բացատրման գործում արտահանման դերին, ապա կարևորվում է միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում արտահանման ծավալների աճը՝ հատկապես նոր ընկերությունների ներգրավմամբ պայմանավորված:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ արտաքին տնտեսական կապերի առաջնահերթությունները» գլխում, դիտարկվել են ներմուծման՝ որպես ՀՀ տնտեսական աճի ապահովման գործոնի դերը և զարգացման առաջնահերթությունները, զբոսաշրջության դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, ինչպես նաև մետաղական հանքաքարի արդյունահանման դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում և ոլորտի առաջնահերությունները:

Հատկանշական է, որ ներմուծումը սկսել է վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենալ ՀՀ իրական ՀՆԱ-ի փոփոխությունների բացատրման գործում, որն էլ, իր հերթին, պայմանավորված է եղել ապրանքների և ծառայությունների արտահանման գործում ներմուծման դերի ավելացմամբ, ինչպես նաև տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառմանն ուղղված ծախսերի աճով, որը ՀՀ փոքր շուկայի և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման պայմաններում հանգեցնում է ներմուծման ծավալների աճին: Դա նաև փաստում է մի շարք մարտահրավերների մասին, որոնք ՀՀ-ն պետք է հաղթահարի: Առաջնահերթություններից է համարվում հատկապես մշակող արդյունաբերության հետագա ծավալների անկումը կանխելու, ինչպես նաև գյուղատնտեսական ծագում ունեցող ապրանքների արտահանման ծավալների աճի նպատակով համապատասխան միջոցառումների մշակումը, որի բաղադրիչ մասը կարող է լինել հատկապես միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում մշակող արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը ներկայացնող համեմատական առավելություններ ունեցող ապրանքների դիվերսիֆիկացումը՝ ըստ շուկաների, ինչպես նաև ՀՀ-ից արտահանվող ապրանքերի կառուցվածքում ՀՀ-ում ստեղծված ավելացված արժեքի տեսակարար կշռի մեծացումը:

Այսպիսով՝ գնահատման արդյունքների հիման վրա պարզ է դառնում, որ մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող ընկերությունների իրական արտահանման ծավալների աճը չի ասոցացվում իրական ՀՆԱ աճի հետ: Հետևաբար, որպեսզի ընկերությունների իրական արտահանման ծավալների աճն սկսի վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի վրա՝ ի պատասխան համաշխարհային պահանջարկի աճի, ապա առաջնահերթությունը պետք է լինի միջնաժամկետ հատվածում իրական արտահանման ծավալների զգալի աճը, որը կարող է ապահովվել նաև նոր ներդրողների ներգրավմամբ:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ բացահայտվել են մրցակցային առավելություն ունեցող ապրանքային խմբերը և որոշակիացվել են տնտեսության, արտաքին շուկաների և արտահանման դիվերսիֆիկացման մոտեցումները, գնահատվել է մի շարք գործոնների՝ ներմուծման, արտահանման, տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման վրա, գնահատվել է նաև ՀՀ զբոսաշրջության ոլորտի նպաստումը տնտեսական աճին և արտաքին շոկերի նկատմամբ ոլորտի խոցելիությունը, բացահայտվել է մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող ընկերությունների դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, մատնանշվել են մարտահրավերները և առաջարկվել են ոլորտի զարգացման հնարավոր միջոցառումները:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու անցման փուլում գտնվող երկրներում տնտեսական առաջնահերթությունների գնահատման քաղաքականության ներդաշնակեցման առավել հրատապ հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական առաջնահերթությունների թիրախավորման քաղաքականության համակարգումն ապահովող ծրագրերի իրատեսականությանը, այդ քաղաքականության բարելավմանը և արտաքին տնտեսական հարաբերությունների ազդեցության գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ,*** որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով,

պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Ատենախոսության առաջին գլխի 1.1. և 1.2. ենթագլուխներն, ըստ էության, իրենցից ներկայացնում են գրականության ակնարկ հետազոտության խնդիրների շուրջ:

Չթերագնահատելով արվածի կարևորությունը, այդուհանդերձ, կարծում ենք, որ հեղինակը պարտավոր էր այդ տեսակետների հիման վրա ձևավորել սեփական մոտեցումները և տալ համապատասխան եզրահանգում: Անհրաժեշտ էր վերլուծության և համադրման (անալիզի և սինթեզի) մեթոդների հիման վրա ամբողջացնել հետազոտությունների հիմնական առանցքը և մատնանշել մեր իրականության հետ ներդաշնակ ինտեգրելու հիմքերը:

2. Աշխատանքի 2.1. ենթագլխում (էջեր 54-57) հեղինակը, ելնելով իր իսկ կատարած վերլուծություններից, կատարում է մեկնաբանություններ և ներկայացնում մոտեցումներ արտահանման դիվերսիֆիկացման և մրցակցային առավելությունների լիիրավ իրացման առումով: Գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը, այդուհամենայնիվ, հետազոտության մատնանշած հատվածում տեղ են գտել որոշակի վիճելի մտքեր և ձևակերպումներ: Մասնավորապես՝ էջ 54-ում ամրագրվում է այն միտքը, որ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի կտրուկ արժեզրկումը էապես կկրճատի դեպի ՌԴ արտահանման ծավալները: Կարծում ենք, միտքը խիստ կասկածելի է և ընդգծված հիմնավորման կարիք ունի:

Երկրորդը, հեղինակը գտնում է, որ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման պարագայում արտահանող ընկերությունների աշխատակիցները կարող են աշխատանք գտնել հագուստի արտադրության ոլորտում: Ակներև է, որ մոտեցումը համակցված չէ համապատասխան հիմնավորումներով:

Բացի դրանից, աշխատանքի այս մասում ներկայացված մոտեցումները չեն պարունակում հաշվարկներ և մեխանիզմներ՝ նվազեցնելով այդ առաջարկների թիրախայնությունը:

3. Ատենախոսության 3.1. ենթագլխի վերնագիրը կոռեկտ չէ, քանի որ ներմուծումն ինքնին չի կարող տնտեսական աճի բարձրացման գործոն լինել:

Թեև ենթագլխի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է միջանկյալ սպառման համար ապրանքների ներմուծմանը, այնուամենայնիվ, հեղինակի այս թեզը համապատասխան զարգացում չի ստանում: Ավելի շատ խոսվում է ներմուծման դինամիկայի, ազդող գործոնների և տնտեսության վրա ունեցած ազդեցության մասին:

4. Չնայած հեղինակի կողմից կատարված բավականին ծավալուն վերլուծություններին (ենթագլուխներ 2.2. և 3.2.), որը հնարավորություն է տվել հեղինակին ստանալ պատշաճ արդյունք երկրի

տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցության վերաբերյալ, այդ գնահատականները չեն ուղեկցվել համապատասխան առաջարկներով և դրանց իրագործման գործիքակազմերով, առկա առաջարկները կրում են հակիրճ և կցկտուր բնույթ:

5. Ատենախոսության 2.3. և 3.3. ենթագլուխները վերաբերում են մետաղական հանքաքարի արդյունահանման խնդիրներին: Հեղինակն, իհարկե, մանրամասն վերլուծել է ոլորտի ընթացիկ վիճակն ու առաջնահերթությունները, սակայն նրա ուշադրությունից դուրս է մնացել մեկ կարևոր հանգամանք. եթե ատենախոսության, առհասարակ Հայաստանի արտաքին առևտրային քաղաքականության անկյունաքարային խնդիրներից մեկը համարվում է արտահանման դիվերսիֆիկացումը և բարձր ավելացված արժեքով ապրանքների արտահանումը, որևէ կերպ չի արդարացվում հանքաքարի արդյունահանումից մետաղածուլության անցման մեխանիզմների և հնարավորությունների չդիտարկելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետությունում տնտեսական առաջնարթությունների քաղաքականության նպատակայնության բարձրացման, զարգացող երկրներում առավել արդիական խնդիրների լուծմանը և զարգացմանն ուղղված քաղաքականությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Հ. Մկրտչյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության տնտեսական առաջնահերթությունների սահմանման քաղաքականության կատարելագործման, մասնավորապես՝ համաշխարհային տնտեսության զարգացման շրջանակներում արտաքին քաղաքականությունների համակարգման հարցերով զբաղվող մարմինների գործունեության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Համլետ Մկրտչյանի «ՀՀ տնտեսական առաջնահերթությունները համաշխարհային տնտեսության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.ԴԱՐԲԻՆՅԱՆ